


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 27 » դեկտեմբեր 2021թ.

No 5161 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 0064, ԵՐԵՎԱՆ,
ՐԱՖՖՈՒ Փ. 111» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՖԱՐՄԱՏԵՔ ՓԲԸ, 0064, ԵՐԵՎԱՆ,
ՐԱՖՖՈՒ Փ. 111, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ») «ԼԵՎՈՒՍՏԵՔ,
ԼԵՎՈՖԼՕՔՍԱՑԻՆ (ԼԵՎՈՖԼՕՔՍԱՑԻՆԻ ՀԵՄԻՎԻԴՐԱՏ), ԱԿՆԱԿԱԹԻԼՆԵՐ,
5ՄԳ/ՄԼ; ՍՐՎԱԿ-ԿԱԹՈՑԻԿ 5ՄԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ



Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 10.12.2021 թվականի N 0103120521 բացասական եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111, Հայաստանի Հանրապետություն») «Լեվո-Տեք, լևոֆլօքսացին (լևոֆլօքսացինի հեմիհիդրատ), ակնակաթիլներ, 5մգ/մլ; սրվակ-կաթոցիկ 5մլ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20357 առ 10.12.2021թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ որակի փորձաքննության արդյունքները չեն համապատասխանում Լեվո-Տեք-ի նատրիումի քլորիդի քանակական որոշման կետով, ինչպես նաև դեղի փաաստաթղթերի փաթեթում ներկայացված է կայունության հետազոտության և որակի հավաստագրի խեղաթյուրված տվյալներ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Տեսե՛ք. 28.12.21 ժ. 14⁰⁰ թ.

1. Մերժել Հայաստանի Հանրապետության «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111» դեղագործական ընկերության արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «ՖարմաՏեք ՓԲԸ, 0064, Երևան, Րաֆֆու փ. 111, Հայաստանի Հանրապետություն») «Լեվո-Տեք, լևոֆլօքսացին (լևոֆլօքսացինի հեմիհիդրատ), ակնակաթիլներ, 5մգ/մլ; սրվակ-կաթոցիկ 5մլ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

27.12.2021

X

ԱՆԱՅԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157